

ԱՐԺԱՆԹԻՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ՄԵԾԱՐԵՑ ԹԵՄԻՍ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԻՍԱԿ ԱՐՔ. ՄՈՒՐԱՏԵԱՆԸ

Երեւելաբքի, 7 Օգոստոսին, արժանթինահայ գաղութը մեծարանքի հանդիսութիւն մը կազմակերպեց ի պատիւ Արժանթինի եւ Զիլէի հայոց բնմի առաջնորդ Գերշ. Տ. Գիսակ Արք. Մուրատեանի, իր քահանայական ձեռնադրութեան 30ամեակին առիթով:

Երուսաղէմէն յատկապէս հրաւիրուած էր Ս. Յակոբեանց վանքի Լուսարարապետ Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեանը, որ Գիսակ Սրբազանի դասընկերն ու օծակիցը եղած էր: Միեւնոյն առիթով, Պուէնոս Այրէս ժամանած էին Պրագիլի հայոց առաջնորդ Տ. Տաթեւ Արք. Ղարիպեանը, Ուրուկուայի հայոց առաջնորդ Տ. Յակոբ Արք. Գըլընեանը եւ Գորտոպայի հայոց հոգեւոր հովիւ Տ. Աւետիս Ա. Քհնյ. Թորոսեանը:

Տօնախմբութիւնը սկսաւ գոհարանական յատուկ մաղթանքով, որ տեղի ունեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, հոծ բազմութեան մը ներկայութեան: Ներկայ էին նաեւ քոյր եկեղեցիներու հոգեւոր ներկայացուցիչներ, եւ Արժանթինի մօտ Հայաստանի դեսպան Արա Այվազեան, Պրագիլի ընդհ. հիւպատոս Ատէմար Պահատեան, Լիբանանի դեսպանը, Սուրիոյ հաւատարմատարը, արժանթինեան եւ այլ պետական ներկայացուցիչներ:

Երեկոյեան ժամը ճիշդ 7.30ին արարողութիւնը սկսաւ Գիսակ Սրբազանի եկեղեցի մուտքով՝ «Հրաշափառ»ի երգեցողութեամբ: Աւետարանէն յաւուր պատշանի ընթերցումներ կատարուեցան, «Կոմիտաս» երգչախումբի եւ «Ս. Գրիգոր

Լուսաւորիչ» դպրաց դասի մասնակցութեամբ՝ յաջորդաբար, Օր. Մաքրուհի Էօմէսէֆեանի եւ Նուպար Սրկ. Տէմիրճեանի ղեկավարութեամբ:

Հայց. Առաքելական եկեղեցւոյ տեղւոյս հոգեւորական դասուն անունով իր ողջոյնի խօսքը բերաւ Արժ. Տ. Արշամ Ա. Քհնյ. Պոգոյեանը, որուն յաջորդեցին Յակոբ եւ Տաթեւ Սրբազանները: Արժանթինի Քրիստոնեայ եկեղեցիներու էփրմէնիք Յանճնախումբի անունով՝ Գերշ. Պենիթէս Ասքուլ Եպիսկոպոսը եւ դեսպան Արա Այվազեան:

Բոլոր բանախօսները վեր առին Գիսակ Արք.ի առաքինութիւնները, ի մասնաւորի՝ համեստութիւնը, աշխատելու կարողութիւնը, բարի կամեցողութիւնը, ծառայութեան կոչումը, ինչպէս եւ պարզ ու անմիջապէս կեցուածքը իր դժուարին առաքելութեան մէջ:

Ի վերջոյ, Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհակալութեան խօսքով հանդէս եկաւ, առաջին հերթին փառք տալով Աստուծոյ, որ իրեն ցոյց տուած է իր կոչումի ուղին եւ ուժ ներշնչած իր գործի ճամբուն վրայ: Զինք յատկանշող համեստութեամբ, կը վախճամ, սակայն, երբ դէպի առաջ կը նայիմ եւ կը տեսնեմ որ տակաւին շատ ընելիք կայ: Կը խանդավառուիմ, որովհետեւ դժուարութիւններուն առջեւ պէտք չէ վախճալ, անոնք, ընդհակառակը, յարատեւելու ուժ կու տան»: Սրբազանը հաւատացեալներն ու ներկաները յորդորեց միշտ լաւատեսութեամբ դէպի առաջ նայիլ:

Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն մը գաղութիս

տիկնանց յանձնախումբերուն եւ կանացի կազմակերպութիւններուն նախաձեռնութեամբ:

Հանդիսավարութիւնը կատարեց Հայց. Առաք. Եկեղեցւոյ Կեդր. Վարչութեան անդամներէն Խուման Սարրաֆեան, որ յաջորդաբար հրաւիրեց Ճարտ. Սարգիս Թիւֆէնճեանը՝ Կեդր. Վարչութեան անունով խօսք քերելու:

Իրենց պատգամը քերին Անտիոքի Ուղղափառ Եկեղեցիէն Քիրիլոս Արք., Ռուս Ուղղափառ Եկեղեցիէն Փրլաթոն Արք., Պաշտամունքներու Ազգային Վարչութեան տնօրէն Խոսէ Գարսոսո եւ Գիսակ Սրբազանի նախկին աշակերտներ: Օրուան քանախօսն էր Նուրհան Արք. Մանուկեան, որ զերծ մնալով հանդիսականութենէ, անձնական յուշերով ջերմօրէն ոգեկոչեց Գիսակ Արք.ի հետ իր քարեկամութիւնը: Իր խօսքերուն աւարտին, երուսաղէմի Միաբանութեան անունով օրուան

յորելեարին յանձնեց յատկապէս պատրաստուած եպիսկոպոսական պանակէ մը:

Համայնքի կողմէն նուէրն էր, յայտնի գեղանկարիչ Թորոս Կիւրլէֆեանի հեղինակած դիմանկարը: Այս առթիւ, բեմ հրաւիրուեցան մասնակցող տիկիները, արուեստագէտը, Հայ Կեդրոնի ատենապետ՝ քարերար Արմէն Մեծատուրեանը եւ Գիսակ Սրբազանը: Կազմակերպիչ Յանձնախումբը նուէր մը յանձնեց նաեւ Նուրհան Արք.ին, քանի որ իր ալ օծման տարեդարձն էր:

Վերջապէս, Գիսակ եւ Նուրհան Սրբազանները հրաւիրուեցան կտրելու քեմիս առաջնորդին եւ Ս. Էջմիածնի նկարները կրող կարկանդակը:

Տեղի ունեցաւ նաեւ գեղարուեստական յայտագիր մը, որուն մասնակցեցան «Մասիս» պարախումբը՝ ղեկավարութեամբ Զաւէն Կնեազեանի, եւ «Հայաստան» նուագախումբը:

Դիւան Ազգային Առաջնորդարանի